

ԵՄ դրամաշնորհային հայտարարություն – Նկարագրեք ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ
EU Call – Describe RELEVANCE

1.2.2. Այս դրամաշնորհային հայտարարության նպատակները

1.2.2. Objectives of this Call for Proposals

Սույն դրամաշնորհային Առաջարկների հայտարարության **հիմնական նպատակն է** նպաստել ժողովրդավարության և օրենքի գերակայության զարգացմանը և ամրապնդմանը և բոլոր հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ձևավորմանը, որպես համագործակցության զարգացման Համայնքային քաղաքականության լրացուցիչ ծրագիր, և երրորդ երկրների հետ համագործակցության, տնտեսական, ֆինանսական և տեխնիկական համագործակցության զարգացում, և որպես ամբողջություն, համահունչ է Եվրամիության արտաքին քաղաքականության հետ:

The **general objective** of this Call for Proposals is to contribute to the development and consolidation of democracy and the rule of law and respect for all fundamental freedoms as a complementary programme to the Community's policy on development cooperation, and economic, financial and technical cooperation with third countries, and consistent with the European Union's foreign policy as a whole.

Սույն ծրագրի **հատուկ նպատակներն են**. աջակցել քաղաքացիական հասարակությանը մարդու իրավունքների պաշտպանության (մասնավորապես քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների), քաղաքական բազմակարծության և ժողովրդավարական քաղաքական մասնակցության և ներկայացուցչության զարգացման և ամրապնդման գործում: Եվրամիությունը գիտակցում է այն փորձը, որն ունի Հայաստանի քաղաքացիական հասարակությունը և դրա հիմնական դերը խմբային շահերի խաղաղ հաշտեցման խթանման, ցանկացած հիմքով խտրականության դեմ պայքարի, և սոցիալական, տնտեսական ու քաղաքական կյանքում գենդերային հավասար մասնակցության զարգացման գործում, այդպիսով տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և շահագրգիռ կողմերի միջև արդյունավետ համագործակցության միջոցով դառնալով դրական փոփոխությունների համար արդյունավետ ուժ:

The **specific objectives** of this programme are to support civil society in developing greater cohesion in working on human rights (notably civil, political, economic, social and cultural rights), political

pluralism and democratic political participation and representation. The European Union recognises the expertise that civil society in Armenia possesses and its fundamental role in promoting peaceful conciliation of group interests, in fighting against discrimination on any ground, and in developing equal gender participation in social, economic and political life, thus becoming an effective force for positive change, through effective cooperation among local civil society organisations and stakeholders.

Առաջարկվող գործողությունները կարող են ներառել գենդերային հավասարության, երեխայի իրավունքների, փոքրամասնությունների խմբերի և բնիկների իրավունքներին առնչվող գործողություններ, վերադարձողների, լրատվամիջոցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների իրավունքները հասկապես կարևորվում են: (Տե՛ս 2.1.3 բաժնում տեսեք գործունեության տեսակների ցուցակը):

The actions proposed may involve activities in the fields of gender equality, the rights of the child, the rights of minority groups and indigenous people, returnees, media, and the rights of persons with disabilities and the elderly are particularly relevant. (See an indicative list of types of activity in section 2.1.3).

1.2.3 Առաջնահերթություններ

1.2.3 Priorities

- - Հասարակական կազմակերպությունների, համայնքային կազմակերպությունների համագործակցություն և (կամ) ցանցային կապ
- Partnerships and/or networking of non-government organisations, community-based organisations,
- և այլ համապատասխան շահագրգիռ կողմեր խրախուսվում են այս ծրագրի շրջանակներում
- and other relevant stakeholders are encouraged under this programme.
- Շեշտը պետք է դրվի տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ամրապնդելու և աջակցելու, նրանց կարողությունների զարգացմանը՝ գործողությունների շարունակականությունն ու կայունությունը ապահովելու վրա::
- Emphasis should be given to strengthening and supporting local civil society organisations, building their capacity so as to ensure continuity and sustainability of the actions;

- Հատկապես խրախուսվում են այնպիսի գործողությունների առաջարկությունները, որոնք, որոնք նպատակ ունեն խթանել միջհամայնքային ներգրավվածությունը և նպաստել հակամարտության մեղմացմանը:
- Proposals for activities that aim to facilitate inter-community involvement and promoting conflict mitigation are particularly encouraged.
- Խրախուսվում է ծրագրի ձևավորման փուլում շահառուի և թիրախային խմբի մասնակցությունը և առաջարկությունները:
- Beneficiary and target group participation at the project design stage is encouraged and proposals
- Սա պետք է ուղղակիորեն/հստակ ներառվի որպես ծրագրի գործունեության մաս
- should explicitly incorporate this as a part of project activities.